ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 6 հուլիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Վ. Պողոսյանի

Քննության առնելով Գրիգոր Հաջյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Գրիգոր Հաջյանը 23.06.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է «... ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածը /2008 թվականի ապրիլի 15-ի դրությամբ/ և ստուգել 223-րդ հոդվածի սահմանադրականությունը»:

Դիմողի կողմից առաջ քաշված փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին՝

Վիճարկվող դրույթի և ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածների միջև հակասությունը դրսևորվում է նրանում, որ նշված դրույթն անձին, որը գործին մասնակից չի դարձվել, հնարավորություն չի ընձեռում վճռաբեկության կարգով բողոքարկել ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտը, որի արդյունքում խախտվում է անձի իրավունքների վերականգնման հնարավորությունը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթն իրենից ներկայացնում է վճռաբեկության կարգով բողոք ներկայացնելու սահմանափակում:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի վիճարկվող նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի որոշակիությամբ ու հստակությամբ, որ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս ստուգվեն ներկայացված փաստաթղթերի սոսկ ձևին և բովանդակությանն առաջադրված պահանջների պաշտպանված լինելու հետ կապված հարցերը: Վեճի վերաբերյալ նյութաիրավական բնույթի հարցերին դատարանը պետք է անդրադառնա միայն գործի արդարադատական ընթացակարգով ըստ էության քննության ժամանակ:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմողին ներկայացվող այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Ինչպես վկայում է դիմումի ուսումնասիրությունը, դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել խնդրո առարկա դրույթներով, ինչպես նաև ներկայացված չէ անմիջական պատճառահետևանքային կապը վիճարկվող դրույթների և դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև: Սահմանադրական դատարանը ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել նաև, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դեպքում դիմումն ակնհայտ անհիմն է:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածին, ապա անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումն է: Այս պայմանը, ի թիվս այլոց, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին կետով: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴԱՈ-21 որոշման մեջ իրավաական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանների կողմից չի կիրառվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոնշյալ նորմը: Դիմողի փաստարկներն առ այն, որ այս դրույթի սահմանադրականության վիճարկման հիմքն այն է, որ վերջինս համակարգային առումով փոխկապված է սահմանադրաիրավական վեճի առարկա մյուս դրույթի հետ, հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանադրական դատարանի որոշումներին ներկայացվող օրենսդրական պահանջներից մեկն էլ սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման ընդունումն է միայն դիմումի առարկայի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթից որպես բացառություն նախատեսել է, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները /«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդված, մաս 9/:

Այսինքն՝ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը պարզելու իրավունքն օրենսդրորեն վերապահված է սահմանադրական դատարանին, և վերջինս դա կատարում է գործի դատաքննության փուլում:

Դիմողը չի պահպանել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 6-ամսյա ժամկետը: Ինչպես վկայում է դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը, դիմողի նկատմամբ կայացվել են վճռաբեկ դատարանի հետևյալ որոշումները՝ համապատասխանաբար 05.03.2009 թվականին, 22.04.2009 թվականին, 10.06.2009 թվականին, 08.07.2009 թվականին, 26.08.2009 թվականին: Ինչ վերաբերում է վճռաբեկ դատարանի 15.03.2010 թվականի որոշմանը, ապա դրանով վճռաբեկ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ. «...վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով»: Այս իրավիճակում կրկին անգամ վճռաբեկ դատարան դիմելը զուտ ձևական բնույթ է կրել եւ չի կարող համարվել դատական պաշտպանության միջոցների սպառման վերջնական ժամկետ, ինչպես նաեւ չի կարող համարվել օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետի հաշվարկման նոր սկզբնաժամկետ: Այսինքն՝ այս դեպքում դիմողի համար սահմանադրական դատարան դիմելու ժամկետի հաշվարկը պետք է սկսել ստորադաս ատյանի դատական ակտի՝ վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորության սպառման պահից, մասնավորապես՝ վճռաբեկ դատարանի 26.08.2009 թվականի որոշման ուժի մեջ մտնելու պահից սկսած 6-ամսյա ժամկետում: Հետևաբար, դիմողը չի պահպանել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Վերոշարադրյալ ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ.

- դիմումն ակնհայտ անհիմն է,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածը չի կիրառվել դիմողի նկատմամբ,
- դիմողը չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Գրիգոր Հաջյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 հուլիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-19